Վազիր վերուց թէ՝—Օր հմալ է, քաղքից դուս էրա, թըղ էրթան։

Ընդոց ընկեր տղեկներուց մէկ գնաց, ըսեց.—Թագաւոր ձեր վրէն հերսոտեր ա, ձըզի քաղքից դուս կ'էնայ։

Ընդոնք լէ ուրանց տեղից էլան ու էկան թագաւորի կուշտ ու գլոխ իջուցին եօթ տեղով, ուրթ դիանդայ կայնան առէջ, ըսին.

—Թագաւոր, մեր մեխքն ի՞նչ ա, օր դու մըզի քաղքից դուս կ'էնիս։

Ըսեց.—Ո՛րտի, խօսք է բերնէս ի գացիր ա, ձըզի պդի դուս էնիմ. յուցկայ գացէք ձեր օթախ ու միտք էրէք, տեսնանք ո՞ր կողմ կ'ուզիք՝ տամ ձըզի, գացէք, հոնի նստէք [1]։

Տղեկներ լէ միտք էրեցին թէ՝—Էրթանք էնդեղ, օր նշանագահ թալեր ինք, էրթանք էնդեղ շինինք։

Մանցին յարի լուսցաւ. լուսն օր բացուաւ, էկան թագաւորի առէջ կայնան։

Ու թագաւոր ըսեց.—Ո՛րտի, ո՞ր կողմ ուզեցիք, օր նստէք։

Ըսեցին թէ՝—Թագաւոր, ֆլան տեղ, ֆլան ախբրի կուշտ հիմ էնք թալի, կ'խնդրինք օր տաս մըզի. մէկ քառսուն իցցուն տուն լէ տուր խըտ մըզի, էրթանք տընըլորուինք։

Թագաւոր վազիրին ճամբեց քաղքի մէջ. իցցուն տուն տուեց քոչէր։

Ու տղեկներ լէ հետ ուրենց քոչին ու գացին։

Գացին էնդեղ հասան։

Քոչեր ուրանց տուն շինին նստան. տղեկներ լէ ուրանց բերդ կ'շինէն։

Տղեկներ օրէն մէկի տուն հաց կ'ուտէն. վիր տուն օր հաց կ'ուտէն, ընդոր տաշտ ու մաղ կ'կախէն։

Տարին թմաւ, բերդն էկաւ գլոխ։

---

[1]) Ա. վարիանտով երկու եղբայրները իրանք են թագաւորին առաջարկում գնալու համար։